

**«Հայաստանի Հանրապետության կառավարության  
2004 թվականի սեպտեմբերի 30-ի N 1782-Ն  
որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ  
կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության կառավարության որոշման  
նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2017թ. N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ**

**ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1782-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱԾՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու ւ մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի պահպանության և օգտագործման ոլորտի բարելավման առաջնահերթ միջոցառումների մասին» N 1782-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ.

ա) Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ներկայացնել օգտակար հանածոների երևակումների ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման նպատակով հողահատկացման փաստաթղթերի ձևակերպման մասին ամփոփ

տեղեկատվություն.

բ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը ներկայացնել օգտակար հանածոների երևակումների ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման նպատակով հողահատկացման փաստաթղթերի ձևակերպման մասին ամփոփ տեղեկատվություն՝ համաձայն աղյուսակ 1-ի.

Աղյուսակ 1.

Հանքային իրավունք ունեցող կրող սուբյեկտի անվանումը	Հանքավայրի անվանումը	Վարձակալի անվանումը	Տրամադրված հողամասի շրջադարձային կողորդինատները՝ Arm WGS -84 համակարգով
--	----------------------	---------------------	---

»:

2) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը ներկայացնել օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակով գույքային իրավունքի պետական գրանցման մասին ամփոփ տեղեկատվություն:»

3) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա<sup>1</sup>» ենթակետով.

«ա<sup>1</sup>) «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը ներկայացնել օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակով գույքային իրավունքի պետական գրանցման մասին ամփոփ տեղեկատվություն՝ համաձայն աղյուսակ 2-ի:

Աղյուսակ 2.

Հանքային իրավունք ունեցող կրող սուբյեկտի անվանումը	Համայնքը	Վարձակալի անվանումը	Տրամադրված հողամասի շրջադարձային կողորդինատները՝ Arm WGS -84 համակարգով	Հողի նպատակը
--	----------	---------------------	---	--------------

»:

4) որոշման 4-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին տրամադրել ամփոփ տեղեկատվություն տրված և դադարեցված ընդերքօգտագործման իրավունքների մասին (կազմակերպության անվանումը, ընդերքի տեղամասի անվանումը, թույլտվության, պայմանագրի և լեռնահատկացման ակտի համարները և գործողության ժամկետները, դրանք տալու և դադարեցնելու ամսաթվերը):»

5) որոշման 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա<sup>1</sup>» ենթակետով.

«ա<sup>1</sup>) յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը տրամադրել ամփոփ տեղեկատվություն տրված և դադարեցված ընդերքօգտագործման իրավունքների մասին (կազմակերպության անվանումը, ընդերքի տեղամասի անվանումը, թույլտվության, պայմանագրի և լեռնահատկացման ակտի համարները և գործողության ժամկետները, դրանք տալու և դադարեցնելու ամսաթվերը, լեռնահատկացման հատակագծի վրա սահմանազատված տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ Arm WGS-84 համակարգով, ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման հավաստագրի տրամադրման ժամանակ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթերի պատճենները):»

2.Որոշման ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարար» բառերը և դրա հոլովածները համապատասխանաբար փոխարինել «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար» բառերով և դրա հոլովածներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: